# ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ
# ՆԱԽԱԳԱՀ

## ՀՐԱՄԱՆ

№ 352-Ա «25» 10 2024թ. ք.Երևան

### ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի «Առանձին խնդիրների իրականացման համար պետական մարմինների կողմից փորձագետի ներգրավման կարգը և դեպքերը սահմանելու մասին» № 878-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ և 7-րդ կետերով և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 27-ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» № 30-Լ հրամանով հաստատված Հավելվածի 19-րդ կետի 11-րդ ենթակետով.

### ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Հաստատել փորձագետի կողմից իրականացվող աշխատանքների ծրագիրը համաձայն հավելվածի:

24.10.2024

ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ Signed by: AVETISYAN ARNAK 1701920336

***Հավելված***

Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի

2024 թվականի հոկտեմբերի 25-ի № 352 - Ա հրամանի

# ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

## ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ

**1. Ներգրավման դեպքը և հիմնավորումները**

Պետական գույքի կառավարման կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) քարտուղարության արտաքին կապերի և ինֆորմատիկայի բաժնի (այսուհետ՝ Բաժին) աշխատանքային ծավալի կտրուկ ավելացմամբ պայմանավորված՝ Բաժնի կանոնադրական խնդիրներից բխող կոնկրետ գործառույթների (մասնավորապես՝ Կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթների ավտոմատացում, գործառույթների թվայնացում՝ բիզնես գործընթացները էլեկտրոնային տարբերակի ստեղծում, ինչպես նաև էլեկտրոնային համակարգի (հասցե՝ www.e-auctions.am) միջոցով պետական գույքի (այդ թվում՝ բաժնետոմսերի) օտարման և վարձակալության տրամադրման էլեկտրոնային աճուրդի անցկացում և այլն) իրականացման համար նպատակահարմար է ներգրավել համապատասխան մասնագետ (փորձագետ):

**2. Փորձագետին ներկայացվող պահանջները**

1) բարձրագույն կրթություն, հանրային ծառայության առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ երկու տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամտեղեկատվական (SS ոլորտ) համակարգերի ոլորտումառնվազն երեք տարվա աշխատանքային փորձ,

2) «Տեղեկատվության ազատության մասին», «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին», «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին», «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին», «Քաղաքացիական ծառայության մասին», «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքների անհրաժեշտ իմացություն,

3) տրամաբանելու, տարբեր իրավիճակներում արագ կողմնորոշվելու ունակություն,

4) գրավոր և բանավոր հաղորդակցության և հանրային խոսքի տիրապետման գերազանց հմտություններ,

5) ներկայացուցչական և կազմակերպչական գերազանց հմտություններ,

6) հայերենի գերազանց իմացություն,

7) անգլերենով և ռուսերենով ազատ հաղորդակցվելու ունակություն,

8) կազմակերպչական, արդյունավետ հաղորդակցման և վերջնաժամկետներում առաջադրանքների կատարման հմտությունների տիրապետում,

9) հարմարվողականություն/ճկունություն, խնդիրներն արագ լուծելու հմտություններ,

10) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

**3. Աշխատանքների իրականացման ժամանակահատվածը**

Փորձագետը ներգրավվում է մինչև վեց ամիս ժամկետով:

**4. Աշխատանքների ակնկալվող արդյունքը**

1) Փորձագետը վեց ամսվա ընթացքում իրականացնելու է ծրագրով նախատեսված աշխատանքները, մասնավորապես՝

ա. Կոմիտեի թվայնացման գործընթացների համակարգում, միասնական թվայնացման միջավայրի ուսումնասիրություն,

բ. Կոմիտեի ստորաբաժանումների գործառույթների թվայնացում, այդ թվում՝ Կոմիտեի աշխատակիցների և ֆիզիկական, իրավաբանական անձանց անմիջական շփման նվազեցում, ինչպես նաև էլեկտրոնային եղանակով Կոմիտեին վերապահված նոր գործառույթների իրականացման հնարավորություն,

գ. Կոմիտեի գործառույթների էլեկտրոնային գործընթացի ավտոմատացում, չթվայնացված տվյալների թվայնացում և Կոմիտեի բիզնես գործընթացների էլեկտրոնային տարբերակի փոխակերպում/ստեղծում,

դ. Կոմիտեի կողմից տեղեկատվության տվյալների քարտեզագրման ու դասակարգման գործընթացների իրականացում,

ե. SS ոլորտին առնչվող խնդիրների թվայնացում, արագ լուծում և աջակցում,

զ. թվայնացման ուղղությամբ Կոմիտեի գործառույթների ընթացիկ (մեկնարկած և չավարտված) ծրագրերի մասին տեղեկատվության ներկայացնում,

է. Կոմիտեի գործառույթների թվայնացման վերաբերյալ պարբերաբար մոնիթորինգի իրականացում, անհրաժեշտության դեպքում՝ մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ հաշվետվությունների ներկայացում,

ը. թվայնացման ծրագրերի առաջնահերթությունների գնահատում, և այդ ուղղությամբ կատարվող տեղեկատվական համակարգերի թվայնացման պորտֆելի արդյունավետության երաշխավորում,

թ. հանրային հատվածում իրականացվող, մեկնարկող և/կամ պլանավորված թվայնացման ծրագրերի ու նախաձեռնությունների ամբողջ ծավալով բացահայտում՝ համագործակցելով ՀՀ վարչապետի աշխատակազմի և ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության հետ, ինչպես նաև համագործակցություն այլ գերատեսչությունների հետ,

ժ. պետական գույքի (այդ թվում՝ բաժնետոմսերի) օտարման և վարձակալության համար իրականացվող աճուրդի անցկացում էլեկտրոնային համակարգի միջոցով՝ սկսած աճուրդի մասին հրապարակվող հայտարարությունից մինչև աճուրդի իրականացում, մասնակիցների գրանցում, հաղթողի ճանաչում և աճուրդի արդյունքների հրապարակում և այլն,

ժա. Բաժնի կանոնադրական խնդիրներից բխող այլ գործառույթների իրականացում:

2) Կատարված աշխատանքի արդյունքը գնահատվում է բավարար, լավ գերազանց:

**5. Հաշվետվություններ ներկայացնելու ժամկետները**

Փորձագետը վեց ամիսը մեկ ներկայացնում է հաշվետվություն:

**6. Աշխատանքի գնահատման չափանիշները**

Աշխատանքը գնահատվում է ըստ փուլերի՝ երեք ամիսը մեկ և ամփոփիչ փուլ: Աշխատանքը գնահատվում է երեք ամիսը մեկ ներկայացված հաշվետվությունների հիման վրա, որի արդյունքում երևում է, թե տվյալ ժամանակահատվածում փորձագետն իր առջև դրված խնդիրների որ մասն է իրականացրել:

Գնահատման համար չափանիշները սահմանվում են ըստ 4-րդ բաժնի «ա»-«ժա» ենթակետերով սահմանված արդյունքների:

Համապատասխանաբար, վերջնարդյունքների չափանիշներն են՝

ա. միասնական թվայնացման միջավայրն ուսումնասիրված է,

բ. Կոմիտեի ստորաբաժանումների գործառույթները թվայնացված են, այդ թվում՝ Կոմիտեի աշխատակիցների և ֆիզիկական, իրավաբանական անձանց անմիջական շփումը նվազել է, ինչպես նաև էլեկտրոնային եղանակով Կոմիտեին վերապահված նոր գործառույթների իրականացման հնարավորությունն ապահովված է,

գ. Կոմիտեի գործառույթների էլեկտրոնային գործընթացը ավտոմատացված է, չթվայնացված տվյալների թվայնացված է և Կոմիտեի բիզնես գործընթացների էլեկտրոնային տարբերակի փոխակերպված/ստեղծված է,

դ. Կոմիտեի կողմից տեղեկատվության տվյալների քարտեզագրման ու դասակարգման գործընթացներն կատարված են,

ե. SS ոլորտին առնչվող խնդիրները լուծված են, թվայնացված են,

զ. թվայնացման ուղղությամբ Կոմիտեի գործառույթների ընթացիկ (մեկնարկած և չավարտված) ծրագրերի մասին տեղեկատվությունը ներկայացված է,

է. Կոմիտեի գործառույթների թվայնացման վերաբերյալ պարբերաբար մոնիթորինգն իրականացված է, մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը ներկայացված է,

ը. թվայնացման ծրագրերի առաջնահերթությունները գնահատված են, և այդ ուղղությամբ կատարվող տեղեկատվական համակարգերի թվայնացման պորտֆելի արդյունավետությունն երաշխավորված է,

թ. հանրային հատվածում իրականացվող, մեկնարկող և/կամ պլանավորված թվայնացման ծրագրերը ու նախաձեռնությունները ամբողջ ծավալով բացահայտված են՝ համագործակցում ՀՀ վարչապետի աշխատակազմի և ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության հետ, ինչպես նաև այլ գերատեսչությունների հետ,

ժ. պետական գույքի (այդ թվում՝ բաժնետոմսերի) օտարման և վարձակալության համար իրականացվող աճուրդը էլեկտրոնային համակարգի միջոցով անցկացված է՝ սկսած աճուրդի մասին հայտարարության հրապարակումից, մասնակիցների գրանցումից, աճուրդի անցկացումից, հաղթող ճանաչումից և աճուրդի արդյունքների հրապարակումից,

ժա. Բաժնի կանոնադրական խնդիրներից բխող այլ գործառույթներն իրականացված են: